Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,

բողոքների 2013թ.-ի առաջին եռամսյակի ամփոփագիր

2013թ-ի առաջին եռամսյակում ստացվել է 349 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 234 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 224-ը, մերժվել՝ 8-ը, ընթացքի մեջ է 2 դիմում: /Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով/:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 29 քաղաքացի, որից 1-ի խնդրանքը բավարարվել է, 21-ինը՝ մերժվել, 7 դիմում ընթացքի մեջ է: /Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով/:

գ/ Առողջապահական բնույթի 45 դիմումից դրական պատասխան է ստացել 42-ը, մերժվել է՝ 3-ը: /Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով:

դ/ Աշխատանքի հարցերով դիմած 18 քաղաքացիներից 4-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 14 դիմում մերժվել է, /դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով/:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմած 5 քաղաքացիներից բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

զ/ Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է 4 քաղաքացի, որից 3-ը ստացել է դրական պատասխան, 1-ը ընթացքի մեջ է:

է/ հողաշինության հարցերով դիմած 5 քաղաքացիներից բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով ոչ մի քաղաքացի չի դիմել:

թ/ Այլ բնույթի 9 դիմում է հաշվառման վերցված, 6-ին տրվել է դրական պատասխան, 3-ը ընթացքի մեջ են:

ժ/ Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ